ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈ ՀԱՆԳՈՒՑԱՎՈՐ ԳՈՐԳԵՐԸ ԵՎ ԱՆՈՆՑ ԾԱԳՈՒՄԱՆ ՀԱՐՑԸ

I. «ԹՐԱՆՍԻԼՎԱՆԱԿԱՆ» ԳՈՐԳԵՐԸ

Արևելյան գորգերու պատմության մեջ առանձին և կարևոր խումբ մը կկազմեն «Թրանսիլվանական» կոչված հնագույն հանգուցավոր գորգերը։ Այս անուանը տրվում է անոնց անոր համար, որ մեծ թվով կգտնվին միայն Ռումանիո ժողովրդական հանրապետության Թրանսիլվանիո շրջանին մեջ և պահվում են հոս։ Անոնք իրենց գույներու թարմության ու պայծառության, մոթիվներու կերտվածքի նրբության, երանգներու սքանչելի ու ներդաշնակ դասավորման շնորհիվ արժանացած են համախարհային ուշադրության։ Արևելագետ շատ մը համբավավոր դեմքեր իրենց հեղինակությանց մեջ զբաղվելով այս գորգերով, մեծապես գնահատած ու վեր հանած են անոնց բացառիկ գեղեցկությունը։

Այն բոլոր մասնագետ հեղինակները (I. Karabacek, J. Orendl, A. Riegl, R. Ettinghausen), որոնք Թրանսիլվանիո հանգուցավոր գորգերուն հնությունը ուզում են ճշտել, ցույց կուտան փոքր թիվի մը համար XVI և XVIII դարերը, իսկ մնացած հարյուրավոր գորգերու համար XVII դարը։ Քանի որ XIX դարեն առաջ հյուսված գորգերը կնկատվին անթիթ կամ հին գորգեր, ուրեմն Թրանսիլվանիո մեջ ներկայիս գոյություն ունեցող և իրենց զմայլելի գույներով աչքի ընկնող այս գորգերը կմտնեն մեծարժեք հանգուցավոր գորգերու շարքին մեջ։

Թրանսիլվանական կոչված այս գորգերը հակառակ իրենց քանի մը հարյուր տարիներու հնության, մնացած են գրեթե անվթար և հասած են մինչև մեր օրերը։ Ասիկա եղած է շնորհիվ սաքսոնական (սաշ) ժողովրդի այն սովորության, որով ուզում են միշտ այդ գորգերով զարդարել իրենց եկեղեցիներու խորանները, հոն թաղված կրոնականներու, դատավորներու և քաղաքային խորհուրդներու անդամներուն գերեզմանաքարերը։ Ասկե զատ, համաձայն ժամանակագրությունների թողած դրությունների, սաքսոնական եկեղեցիներու մեջ այդ գորգերով կորոշեն սահմանները զանազան արհեստակցական միություններու հատկացված վայրերու, և այդ միությունները միշտ կմրցեին իրարու հետ կարելի եղածին չափով գեղեցիկ և շքեղ գորգերով զարդարելու իրենց տրված այդ տեղերը։ Այսպիսով, այդ գորգերուն մեծագույն մասը չգործածվելով իրրև փոռոց գետնի վրա, ասոր համար ալ կրցած են դարերու մեջեն հասնել մեզի։ 1914 թ. եղած ընդհանուր հաշիվի մը համաձայն, Թրանսիլվանիո եկեղեցիներուն, թանգարաններուն և մասնավորներու հավաքածուներուն մեջ այդ գորգերեն գոյություն ունեին մոտ վեց հարյուր օրինակներ։

Այսօր, Թրանսիլվանիո շարք մը քաղաքներուն՝ Պրաշով, Պիսթրիցա, Սիկիշոարա, Հիտիաշ, Սիպիլ-Ալպա և ուրիշ բազմաթիվ քաղաքներու եկեղեցիներուն, ինչպես նաև Սիպիու քաղաքին Պրուքենթալ կոչված նշանավոր թանգարանին մեջ, որոնք մի առ մի այցելելու և մանրամասնորեն քննելու առիթը տրվեցավ ինծի, կպահվին այդ գորգերեն սքանչելի և հազվագյուտ օրինակներ։

Ուշագրավ պարագա մը, որ այդ գորգերը ուսումնասիրողներու նկատողությունը կգրավե, այն է, որ այդ գորգերուն մեջ գոյություն չունին արևելյան ուրիշ տեսակի հանգուցավոր գորգեր, ինչպես՝ պարսկական, միջին-ասիական, չինական։ Անոնց մեջ չկան նաև մետաքսով հյուսված գորգեր, ինչպես նաև արևելյան կարպետներ։ Անոնք կկազմեն մեծ մասով խորանական և երկրաչափական, գծային մոթիվներով՝ փոքր չափերու վրա հյուսված գորգեր։

Հոս մեր ընթերցողներուն լրիվ գաղափար մը տալու համար այդ գորգերուն և անոնց տեսակներուն վրա, կներկայացնեմ իրենց գլխավոր մոթիվներու տարբերության տեսակետով կազմված առանձնահատուկ խումբերեն շարք մը գորգանկարներ։

Առաջին խումբին կպատկանին կլոր, երեքական գնդիկներով գեղազարդված գորգերը։ Այս ձևի գորգերուն թիվը սահմանափակ է։ Հոս մեջ բերված գորգին չափն է 108—171 սմ, ունենալով իրրև խտություն 27×28 հանգույցներ մեկ քառակուսի դեցիմետրի մեջ։ Մեջտեղի խորանաձև ֆոնը, ինչպես նաև խորանին վրան, հյուսված է գոց ճերմակ գույնով։ Մակերեսին վրա երևացող կլոր երեքական գնդիկները արված են սև գույնով։ Կպատկանի XVII դարուն։ Իր լայն ճուտքին (bordur) ֆոնի գույնն է սև, շրջապատված նեղ, գոց ճերմակ երիզներով։ Դորգին ներքնամասի չորս անկյունները հյուսված են կարմիր։ Ավստրիացի արևելագետ Քարապաչիք կլոր գնդիկները կկարծե բլալ պարսկական հին մոթիվ մը, ցուլի աչքեր, կամ ուժի խորհրդանիշը, ուրիշներ կնկատեն ցուլի համաստեղությունը կամ չինական ծագում ունեցող մոթիվ մը։ Ավելի հիշտ բացատրությունը այդ մոթիվներուն այն է, որ անոնք կուգան մեզի նախնադարյան հասարակության շրջանեն և ցույց կուտան այդ նշանները կրողներուն որ տոհմին անդամ բլալը։

Երկրորդ խումբին մեջ կմտնեն «թռչնագլուխ» մոթիվներ ունեցող գորգերը (նկար 1)։ Այսպիսի գորգերուն թիվը շատ մեծ է և հյուսված են XVII դարուն։ Իրրև չափ մեծ մասով ունին մոտավորապես 138×21։ սմ։ Հոս ներկայացված գորգին չափն է 122×195 և աշխատված է 27×29 հանգույցներ մեկ քառակուսի դեցիմետրի մեջ։ Այս գորգերու մակերեսին վրա իրրև գլխավոր ու հատկանշական մոթիվներ հյուսված են թռչունի գլուխներ հիշեցնող դարդեր և ասիկա պատճառ եղած է, որ անոնք կոչվին «թռչնագլուխ գորգեր»։ Այս ձևի գորգերը կանվանեն նաև «ճերմակ գորգեր» անոր համար, որ աշխատված են միայն գոց ճերմակ ֆոներով։

Այս խումբին պատկանող գորգերու լայն ճուտքերու (գոտի) մեջ ընդհանրապես հյուսված են կենաց ծառի մոթիվները կարմիր և գեղին գույներով, իսկ ֆոնին մեջ գետեղված են տոտեմ թռչունները, ունենալով իրենց մարմնին վրա և շուրջը ոճավորված ծաղիկներ, իրրև պտղաբերության խորհրդանշան։

Երրորդ խումբին կպատկանին կովկասյան գծային գարդանախշերը հիշեցնող գորգերը։ Այս և նման գորգերուն կտրվի նաև Holbein անունը, անոր համար, որ նույնանուն նկարիչը իր նկարներուն մեջ հաճախ վերարտադրած է նույնությամբ այդ գորգերուն մոթիվները։ Ասոնք հյուսված են XVII դարուն մեջ և համեմատաբար ուրիշներու, ավելի մեծ չափերու վրա, 175×400 սմ։ Մեր հոս մեջ բերած գորգին չափն է 148×270 սմ, և իրրև խտություն ունի 35×37 հանգույցներ մեկ քառակուսի դեցիմետրի մեջ։ Այս տեսակի գորգերուն գլխավոր ֆոները հյուսված են գոցկապույտ գույնով և լայն ճուտքերը (գոտի)՝ կարմիր։ Ասոնց վրա տիրապետող նախշերը, տարբեր ձևերու տակ, քառաթև խաչեր են, որոնք կխորհրդանշեն բնության չորս ուժերը՝ արևը, օդը, ջուրն ու հողը։

Չորրորդ խումբին մեջ կմտնեն Ուշաք կոչված գորգերը, որոնց գլխավոր մոթիվները միշտ քառաթիվ խաչեր կհիշեցնեն (նկար 2)։ Այս գորգերը հյուսված են կարմիր գույներով և ճուտքերը (գոտի)՝ կապույտ կամ կարմիր։ Իրենց չափերը՝ նկար 4-ը ունի 123×204, իսկ թիվ 5 նկարի գորգը 110×152 սմ և իրենց հանգույցներու խտությունը կհասնի 30×42, 35×41 մեկ քառակուսի դեցիմետրի մեջ։ Այս գորգերը հյուսված են նույնպես XVII դարուն մեջ։



Նկ. 1



Նկ. 2

Հինգերորդ խումբին կպատկանին առհասարակ խորանական մոթիվներ ունեցող գորգերը, որոնք կբաժնվին երկու տեսակի, առաջինը սյուներով բաժնված, երկրորդ խումբը կկազմեն դեմ-դիմաց գույգ խորաններ ունեցող գորգերը (նկար 3)։

Առաջին տեսակի պատկանողները առհասարակ հյուսված են՝ գլխավոր ֆոնը գոց և բաց-կարմիր, իսկ յայն ճուտքերը՝ գոց ճերմակ գույներով։ Առանձնապես խիստ հաճելի է անոնց պարզ և խաղաղ տեսքը։ Ասոնք բազմաթիվ են և աշխատված են XVII և XVIII դարերուն մեջ։ Իրենց չափերն են մոտ 125×185 սմ։ Հոս ներկայացված գորգին չափն է 122×178 սմ և ունի 29×36 հանգույցներ մեկ քառ. դեցիմետրի մեջ։

Նկ. 3

Երկրորդ տեսակիները, որոնք ունին զույգ խորաններ դեմ-դիմաց, աշխատված են գոց ճերմակ, կարմիր և կապույտ գույներով։ Գոց ճերմակ ֆոն ունեցողները ունեն կարմիր ճուտք, կապույտները կարմիր, իսկ կարմիր ֆոն ունեցողները՝ կապույտ։ Հոս մեր ներկայացուցած գորգին ֆոնը հյուսված է կապույտ, իսկ յայն ճուտքը՝ կարմիր։ Իրրև մոթիվներ անոր ֆոնին մեջ կնշմարվին կենաց ծառի մոթիվները ոճավորված ձևին մեջ։ Աշխատված է XVIII դարուն, իր չափն է 120×158 և իրրև խտություն ունի 34×34 հանգույցներ մեկ քառ. դեցիմետրի մեջ։

Առհասարակ խորանական մոթիվները կհասնին մեզի հնագույն տոհմատիրական շրջաններեն։ Այդ խորաններու կամարներուն տակ անոնք կգումարեին իրենց ժողովները և կորոշեին առաջնորդները կամ կլուծեին իրենց կենցաղի հատուկ խնդիրները։ Ավելի վերջը գանազան կրոններ ընդունեցին այդ ձևերը իրենց մզկիթներուն կամ եկեղեցիներուն մեջ և ասոր համար ալ այս խորանական մոթիվներով գորգերը գործածվելով աղոթքի ժամանակ կոչվեցան ընդհանուր անունով «աղոթքի գորգեր»։

2. ԹՐԱՆՍԻԼՎԱՆԱԿԱՆ ԳՈՐԳԵՐՈՒՆ ՄԱԳՈՒՄԸ

Թրանսիլվանական գունագեղ գորգերու հնության, անոնց գործերուն, չափերուն, խտություններ և գույներու մասին վերը գաղափար մը տալե վերջ մեր ընթերցողներուն, կմնա ճշտել անոնց ծագման հարցը։

Ու՞ր հյուսված են այդ գորգերը։

Իրր պատասխան այս հարցումին կհայտնվի այն կարծիքը, թե անոնք հյուսված են Փոքր Ասիո մեջ և թուրքերու կամ առևտրականներու կողմե բերված են հոս։ «Թրանսիլվանիո մեջ մեծ թիվ մը կկազմեն այդ գորգերը և ասիկա կբացատրվի այն իրողությամբ, որ իրենք, թուրքերը նախընտրեցին այս ձևի գորգերը և զանոնք բերին այս երկրին մեջ»։

Հայտնված այս կարծիքը, ինչպես նաև նման ուրիշները պիտի կրնային ճիշտ նկատվել, եթե այդ գորգերը քննվին միայն իրենց արտաքին բնույթով, առանց խորացնելու այդ քննությունը այս գորգերու կազմության վրա։

Դրված այդ հարցումին անխալ պատասխան մը տալու համար պարտավոր ենք ետ դառնալ պատմության, քննել այդ գորգերուն հյուսված շրջաններու պատմական դեպքերը, և հասնել ճիշտ եզրակացության։

Ինչպես հայտնի է, հանգուցավոր գորգերու գեղեցիկ ձեռարվեստը ծագում առավ, զարգացավ և իր կատարելության հասավ արևելյան կարգ մը երկիրներու մեջ, որոնցմե ամենագլխավորներեն մեկը հանդիսացավ Հայաստան։ Արևելագետ հեղինակ մը՝ Ռ. Էթինգհաուզեն, հայկական գորգերու մասին հետևյալ բնորոշումը կրնե. «Հնագույն գորգերու շատ մը ուրիշ խումբերեն առաջինը կարելի է նկատել հայկականը, որ համաշխարհային գնահատության արժանացավ և որ, սկսած արաբ խալիֆաներու շրջանեն (661—774), կհիշատակվի իրրև արվեստի ամենաթանկագին գործերեն մեկը»[2]։

[1] E. Schmuzler, Altorientalische Teppiche in Siebenburgen, էջ 13։

[2] R. Ettinghausen, Les Tapis armeniens, Encyclopedie de l'Islam, Supl. II.

Մեր թվականությունեն առաջ և կամ անկե հետո, համաձայն գրավոր և նյութական ապացույցներու, հանդուցավոր գորգերու ձեռարվեստը ամենեն տարածված արհեստներեն մեկը եղավ Հայաստանի մեջ։ Մասնավորապես միջնադարյան հայկական հրաշալի գորգերը, իրենց հարուստ ու ներդաշնակ գույներով, իրենց գործվածքի խտությամբ ու կատարելությամբ համբավավոր էին Հայաստանի սահմաններեն դուրս։ Միջին դարեն մեզի հասած ամենահնագույն գորգը, որը այժմ կգտնվի Վիեննայի ազգային թանգարանին մեջ, ինչպես կհայտնվի իր եռակամար խորանին մոտիվի վրան հյուսված հայերեն արձանագրությունեն, աշխատված է Հայաստանի մեջ XIII դարու սկիզբներուն, 1202 թ.։

Ավելի առաջ, երբ VII դարուն արաբական տիրապետության ծանր լուծին տակ ինկավ Հայաստան, այս առթիվ ստեղծված քաղաքական և տնտեսական անհանդուրժելի պայմաններուն հետևանքով մեծ թիվով հայեր ստիպված եղան անցնել դրացի Բյուզանդական կայսրության սահմաններեն ներս և բնակություն հաստատել Փոքր Ասիո Ուշաք, Այտրն, Կեորտես, Պերկամո, Քուշա, Լատիք, Սպարթա, Քոնիա, Կեսարիա, Սեբաստիա և ուրիշ քաղաքներ, երբ դեռ թուրքեր գոյություն չունեին այդ շրջաններուն մեջ։ XIII դարու վերջերը Մարկո-Պոլոն երբ անցավ այս շրջաններեն, գրեց հետևյալը. «Հայերը և հույները երեք մեծ քաղաքներու մեջ՝ Գոնիա, Կեսարիա, Սեբաստիա կհյուսեն աշխարհի ամենագեղեցիկ և ամենանուրբ գորգերը»[3]։

Փոքր Ասիա գաղթած այդ հայերը, ուրիշ ավանդական դարդերով գորգերու հետ, հյուսեցին նաև իտալական մոթիվներով նրբաճաշակ գորգեր, սրանք մեծ ընդունելություն գտան մահմեդական թուրքերուն կողմե, որոնք խորանի մոթիվին կրոնական նշանակություն տալով սկսան գործածել աղոթքի ժամանակ։

Հետագային, երբ Բյուզանդական կայսրության անկումով թուրքերը գրավեցին Փոքր Ասիան, այս շրջանի հայերուն մեծ մասը չկրնալով տոկալ թուրքերու հալածանքներուն, գաղթեցին գանազան երկիրներ։ Այս գաղթականության բնույթը ցույց կուտան հետևյալ տողերը. «Փոքր Ասիո Այտրն քաղաքի հայերը եկած են 400 տարիներ առաջ Կովկասեն՝ Երևանեն, Լարաբաղեն, Ագուլիսեն, ունին 50 տուն. ժամանակին անոնք 500 տուն եղած են»[4]։

Փոքր Ասիայեն գաղթող այս հայերեն մեծ մասը եկան Ռումանիո Մոլտովայի շրջաներ և ասկե ալ անցան Թրանսիլվանիա. «Հայերուն թափանցումը դեպի Մոլտովա, որ կգտնվեր Արևելքի—Լեհաստանի—Գերմանիո առևտրական ճամփուն վրա,— կգրե պրոֆ. Վ. Բրնրցյանու,— կբացատրվի նաև այն իրողությամբ, որ թրքական տիրապետությունը XIII դարուն Հայաստանեն տարածվեցավ դեպի Փոքր Ասիա, ստիպելով հայերուն փնտրել առևտրական ուրիշ կենտրոններ»[5]։

Ավելի հին ժամանակներեն արդեն հայեր կային Թրանսիլվանիո մեջ, քանի որ XII դարու սկիզբները Ղրիմեն մեկնող հայերեն մաս մը ալ ուղղվեցավ դեպի այս շրջանները։ Հունգար ժամանակագիրներ կհիշատակեն հայերու գոյությունը Թրանսիլվանիո մեջ X դարուն։

XVI և XVII դարերուն Թրանսիլվանիա գաղթող մեծաթիվ հայերը հաստատվեցան Կեորկին, Կեոլա, Պաշտպալով, Սեփվիզ, Պիսթրիցա, Ջիթ-Շեոմլեո և ուրիշ շատ մը քաղաքներու և գյուղերու մեջ։ Ը վերջը անոնք հիմնեցին երկու քաղաքներ իրենց համար։ Այս քաղաքներեն առաջինը Կեոլա բերդին քով, Սոմեշ գետի աջ եղերքին վրա, Լեոփոլտ I կայսրի արտոնությամբ, գեղատեսիլ բլուրներով շրջապատված դաշտին մեջ XVII դարուն, որը կոչեցին Հայաքաղաք (այժմ Կեոլա), իսկ երկրորդը, որ այն ատենվա թագուհիին անունով կոչեցին Եղիսաբեթուպոլիս (այժմ Տումպրրվին), գրեթե միևնույն թվականին կառուցված, Թրնովա գետին արևելակողմը Թրանսիլվանիո Միքայել Ապաֆի իշխանին թույլտվությամբ, իր իշխանական կալվածներեն մեկուն մեջ։

Հայերե կառուցված այս երկու զուտ հայաբնակ քաղաքները մոտ երեք դար, ըստ տրված կայսերական հրովարտակներու, ապրեցան ներքին անկախությամբ, ունենալով իրենց հայ դատավորներեն ու վարչական կազմակերպություններ։

Ահա, այս հայերը, շատ մը կարևոր արհեստանոցներու կողքին հիմնեցին նաև հանգուցավոր գորգերու արհեստանոցներ, որտեղ հյուսեցին համաշխարհային համբավ շահած և Թրանսիլվանական (Ziebenbürgen) անունով ճանչցված գորգերը։

Ավստրիացի նշանավոր բանասեր և արևելագետ I. Karabacek իր գրքին մեջ կհիշատակե, թե «Հայաքաղաքի, Եղիսաբեթուպոլսո, ինչպես նաև Կեորկենի և ուրիշ քաղաքներու և գյուղերու հայերը կհյուսեին հանգուցավոր գորգերը»[6]։

---

3 Մարկո-Պոլո, Ճանապարհորդական նոթեր, Լենինգրադ, 1940, էջ 17—18։

4 Հ. Հակոբ վ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և շրջակայք, էջ 56։

5 I. Karabacek, Die Tersiche Nadalmalerei Suzandzehircl, էջ 42։

6 Հայր Տովրիկյան, Հայր Յեղիսաբեթուպոլիս Դրանսելվանիո, Վիեննա, էջ 81։

Այս քաղաքներու հայ գորգագործ վարպետներու հյուսած գեղեցիկ գորգերը, որոնց արվեստը բերին իրենց բուն հայրենիքեն՝ Հայաստանեն և Փոքր Ասիայեն, մեծապես գնահատվեցավ տեղացիներուն կողմե։ Ահա, ասոր համար ալ մեծ թիվով անոնք հյուսվեցան միայն Թրանսիլվանիո մեջ և հոս ալ պահվեցան վերը ցույց տրված պայմաններուն շնորհիվ։ «Կարոլոս Զ-ի կայսերական հրովարտակով հայերու գործարանաց և ձեռակերտաց տարածության համար ոչ միայն Թրանսիլվանիո, այլև բովանդակ կայսրության մեջ այդ արտադրությունները ծախելու իրավունք տրվեցավ»։

Այս պատմական իրողությունը հաստատող հետևյալ շատ կարևոր պարագան ևս պետք է նկատի ունենալ։ Թրանսիլվանական կոչված այս գորգերը հիմնովին կտարբերին փոքրասիական գորգերեն, գիրենք կազմող նյութին տեսակետով։ Այս, Թրանսիլվանական գորգերը հյուսված են տեղական զուրման կոչված ոչխարին բուրդով։ Այս ոչխարը կուտա երկայն, հաստ և կարծր թելեր, մինչդեռ փոքրասիական ոչխարները կարտադրեն նուրբ, կակուղ և բարակ թելերով բուրդեր, որոնցմով աշխատված գորգերն ալ չփված ժամանակ կակուղ և հաճելի տպավորություն կթողուն։ Այս է պատճառը, որ Թրանսիլվանական գորգերուն մակերեսը կարծր է, և ասիկա ալ մեծագույն և հիմնական ապացույցներեն մեկն է հաստատելու համար, որ այս գորգերը հյուսված են հոս, Թրանսիլվանիո մեջ, դարեր առաջ արևելքեն գաղթած և Ռումանիո այս շրջանին մեջ բնակություն հաստատած հայերուն կողմե։

Մեր հայտնած կարծիքը հաստատող ապացույցներին մեկն ալ կարելի է հաշվել նաև մեր օրերուն կրկնված հետևյալ իրողությունը։

Առաջին համաշխարհային պատերազմեն հետո, 1918 թ. հայերը սկսան հյուսել, այս անգամ Ռումանիո բոլոր շրջաններուն մեջ, հանգուցավոր գորգեր։ Ահա ասոր բացատրությունը։

1914 թ. նորեն Թուրքերուն կազմակերպած արյունալի սպանդեն հրաշքով ազատված փոքրաթիվ հայերը գաղթեցին զանազան երկիրներ, որոնց կարգին նաև Ռումանիա։ Այստեղ ապաստան գտած այս հայերուն մեջ, ուրիշ արհեստավորներու կողքին կային նաև գորգագործ վարպետներ, որոնք սկսան հիմնել գորգագործական արհեստանոցներ զանազան քաղաքներու մեջ, որոնց կարգին կարելի է հիշել հետևյալները՝ Պուքրեշ, Պրայիլա, Կեոլա, Ֆրկրրաշ, Յաշ, Կալաց, Քոնսթանցա։ Ահա թե այս մասին ինչ կգրեր արվեստի նշանավոր քննադատ Գրիգոր Զամպարճյան. «Թրքական հալածանքներեն փախչող գաղթական հայերը, որոնց մեջ կային նաև տաղանդավոր գորգագործ վարպետներ, հաստատվեցան եվրոպական կարգ մը երկիրներ։ Այս հայերեն քանի մը ընտանիքներ ևս եկան Ռումանիա և սկսան իրենց հիմնած արհեստանոցներուն մեջ հինել հանգուցավոր գորգեր»[7]։ Այս կերպով, մինչ այդ արևելքի սեփականություն համարված այս գեղեցիկ ձեռարվեստը դարձավ Ռումանիո սքանչելի ձեռարվեստներեն մեկը։

ՍԻՐԱԿ ԳՍԳԱՆՅԱՆ (Բուխարեստ)

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՄԱՏՅԱՆԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գրիգոր Տաթևացու կողմից 1374 թ. ընդօրինակված և նաչատուր արեգա Կեսարացու կողմից նկարազարդված ավետարան, որն այժմ պահվում է Էջմիածնի վանքի գանձարանում (ձեռագիր N 96) եզակի արժեք է ներկայացնում իր ոսկեպատ կազմով։ Մեզ հասած բիբլիական տեքստերի համաձայն այս ձեռագիրը 1920 թ. Տաթևի վանքից տարվել է Իրան և երկարաժամյա դեգերումներից հետո, 1964 թ. վերադարձվել Էջմիածին պարսկահայ հայրենադարձների կողմից։ Ձեռագիրը գրված է Գարանաղյաց գավառի Սեպուհ Լեռան Գր. Լուսավորչի անապատում. մագաղաթը պատրաստել է Հովհաննես Որոտնեցին, իր աշակերտ Գրիգոր Տաթևացու համար։

Ձեռագրի կազմը (նկ. 1) կաշեպատ տախտակ է. 2 կողերը, կոնակը և դռնակը ոսկով երեսապատված, որոնցից երկու կողերն ու դռնակը՝ թերթերով, իսկ կոնակը՝ նույը հյուսածո շղթայով։

Կազմի չափերն են՝ 13,7×9,5×6 սմ, իսկ կոնակի հանդիպման վայրերում Ա և Բ կողերի բարձրությունը հասնում է 14,7 սմ-ի։

---

7 Գրիգոր Զամպարճյան, Հայկական գորգարվեստը, Անի, առաջին տարի, հատ. II, Պուքրեշ, 1936։